

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական
բանկի նախագահ պրն. Ա. Զավադյանին**

Հարգելի պարոն Զավադյան

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի, 50-րդ կետի Ձեզ եմ ներկայացնում «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ին վերաբերող 09.09.13թ-ի էական տեղեկություն:

Տնօրեն

Պապ Բադալյան

11.09.13թ.

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի, 50-րդ կետի, բացահայտում են «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը՝

2013թ-ի սեպտեմբերի 9-ին տեղի ունեցավ տնօրենների խորհրդի նիստ, որի ընթացքում քննարկվեցին որոշ հարցեր և որոշում ընդունվեց 2013թ-ի սեպտեմբերի 23-ին, ժամը 16:00-ին հրավիրել բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով Ընկերության գտնվելու վայրում՝ ՀՀ, ք. Երևան, Շիրակի 2/2 հասցեում, Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող փաստաթղթերին բաժնետերերը կարող են ծանոթանալ Ընկերության գտնվելու վայրում՝ ՀՀ, ք. Երևան, Շիրակի 2/2 հասցեում:

Տնօրենների խորհրդի այլ էական որոշումները ներկայացվում են ստորև.

- Ընկերության խորհրդի նախագահ ընտրվեց խորհրդի անդամ Սամվել Բեգլարյանը:
- Ընկերության գործադիր մարմնի (բարձրագույն գործադիր ղեկավարության) քանակական կազմը սահմանվեց 3 անդամից՝ հետևյալ կազմով.
 - գլխավոր գործադիր տնօրեն՝ ի դեմս Ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Պապ Բադայանի (մասնագիտությամբ տնտեսագետ, ավարտել է Երևանի ժողտնտեսության պետական ինստիտուտը):
 - ֆինանսական տնօրեն՝ ի դեմս «ԹՄ աուդիտ» ՓԲԸ-ի կողմից լիազորված անձ Ռուդիկ Պողոսյանի (մասնագիտությամբ, տնտեսագետ հաշվապահ է ավարտել է Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը):
- Մարդկային ռեսուրսների կառավարման տնօրեն՝ ի դեմս մարդկային ռեսուրսների կառավարման վարչության ղեկավար

Սյուզաննա Ենգիբարյանի (մասնագիտությամբ սոցիոլոգ, ավարտել է Երևանի պետական համալսարանի սոցիալագիայի ֆակուլտետը՝ մագիստրոսի կոչումով):

- Կորպորատիվ կառավարման ընթացակարգերը կանոնակարգելու նպատակով կորպորատիվ քարտուղար նշանակվեց Ընկերության ռազմավարական զարգացման վարչության մենեջեր Աննա Վարդանյանը (մասնագիտությամբ լեզվաբան, ավարտել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը, այնուհետև Վալենսիայի համալսարանի անգլերեն լեզվաբանության ֆակուլտետը՝ մագիստրոսի կոչումով):
- Հաստատվեց Ընկերության կորպորատիվ կառավարման հարաբերությունները կարգավորող ներքին իրավական ակտերի փաթեթը՝ հետևյալ բովանդակությամբ.
 - Ընկերության կորպորատիվ կառավարման կանոնագիրք,
 - Ընկերության կորպորատիվ վարքագծային կանոններ,
 - Ընկերության կորպորատիվ քարտուղարի կանոնակարգ,
 - Ընկերության ռիսկերի կառավարման կանոնակարգ,
 - Ընկերության շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման կանոնակարգ: